ԲԱՎԱՐԱՐ ՇՆՈՐՀ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 1:14, 16-17

*14 Եվ Բանը մարմին դարձավ ու մեր մեջ բնակվեց, և տեսանք նրա փառքը. փառք, որ Հորից ունի Միածինը՝ **լի շնորհով** ու ճշմարտությամբ:*

*16 Եվ նրա լիությունից մենք բոլորս **շնորհի վրա շնորհը ստացանք**. 17 որովհետև օրենքը Մովսեսի միջոցով տրվեց, իսկ շնորհն ու ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի միջոցով եղան:*

*Հռ. 5:20-21 – 20 Բայց օրենքը մեջ ընկավ՝ որ երևան գա հանցանքների բազմությունը. բայց որտեղ մեղքն ավելի եղավ, այնտեղ **շնորհն առավել շատացավ**, 21 որպեսզի ինչպես որ մեղքը մահվան միջոցով թագավորեց, այնպես էլ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով **շնորհը արդարությամբ** թագավորի հավիտենական կյանքի համար:*

Շնորհ, χάρις – 156x

Եբրայերեն բառը, որը թարգմանվել է որպես «շնորհք» (חֵן, Խէին) նշանակում է բարեհաճություն, ողորմություն կամ բարություն:

Պողոս Առաքյալն իր նամակներում օգտագործում է «շնորհք» (հունարեն «χάρις, խարիս» բառը) մոտավորապես 83 անգամ, որոնք կազմում են Նոր Կտակարանի զգալի մասը:

- ***Շնորհք բառը Հին Կտակարանում հանդիպում է 20 անգամ, սովորաբար…: «Շնորհք» բառի առաջին գործածությունը հայտնվում է Ծննդոց 6:8-ում:***

  Ծննդոց 6:8 – Բայց Նոյը շնորհ գտավ Տիրոջ առաջ:

- ***Սաղմոսներում շնորհքի երկու երևույթները շատ քաջալերական են.***

  *Սաղմոս 45:2 – Դու գեղեցկագույնն ես մարդկանց որդիներից. քո շրթունքների վրա **շնորհք է** թափված. դրա համար էլ Աստված քեզ օրհնեց հավիտյան:*

  *Սաղմոս 84:11 – Որովհետև Տեր Աստված արև է և վահան, **Տերը շնորհք** և փառք է տալիս. Տերը ոչ մի բարիք չի խնայում անարատությամբ գնացողներին:*

- ***Եսթեր 2.17 հատվածը հատկապես հետաքրքիր է, քանի որ այն օգտագործում է եբրայերեն շնորհ բառը (חֵן, Խէին), և դա վերաբերում է եկեղեցուն որպես Քրիստոսի հարս:***

  *Թագավորը Եսթերին բոլոր կանանցից ավելի սիրեց, և նա բոլոր աղջիկներից ավելի սեր և **շնորհ** գտավ նրա առաջ. և արքայական թագը նրա գլխին դրեց և նրան Վաշթիի փոխարեն թագուհի դարձրեց:*

I. ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀԸ ԲԱՎԱՐԱՐ Է ԻՄ...

- ***Փրկության, Ներման և Սուրբ Կյանք ապրելու.***

Եփ. 2:8 – Շնորհով եք փրկվել հավատի միջոցով, և սա ձեզանից չէ, այլ Աստծու պարգևն է:

Ա Կոր. 1:6-7 – 6 Քրիստոսի մասին վկայությունն այնպես հաստատվեց ձեր մեջ, 7 որ ոչ մի շնորհ ձեզ չպակասի մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությանն սպասելով:

Եբր. 12:28 - 28 Ուստի անշարժ թագաւորութիւն ընդունած լինելով, պինդ բռնենք այն շնորհքը որով պաշտում ենք հաճութեամբ Աստուծուն

- ***Աստծո շնորհի նպատակն է.***

Տիտոսին 2:11-12 – 11 Աստծու փրկարար շնորհը հայտնվեց բոլոր մարդկանց. 12 այն մեզ խրատում է, որ մերժենք ամբարշտությունն ու աշխարհիկ ցանկությունները և խոհեմությամբ, արդարությամբ ու աստվածապաշտությամբ ապրենք այս աշխարհում՝:

- ***Ներված մարդիկ ստանում են ներելու շնորհը:***

Եփ. 4:32 – Միմյանց հետ քաղցր եղեք, գթած՝ միմյանց ներելով, ինչպես որ Աստված էլ Քրիստոսի միջոցով ձեզ ներեց:

Հիշեք աններող ծառայի առակը (Մատթեոս 18:21-35):

Մատթեոս 18:26-27 – 26 Այդժամ ծառան ընկավ նրա առաջ, երկրպագում էր նրան և ասում. "Տեր, համբերատար եղիր իմ նկատմամբ, և բոլորը կհատուցեմ քեզ": 27 Տերն այդ ծառային գթաց, արձակեց նրան և պարտքը նրան ներեց: ***(10,000 հազար քանքար պարտք)***

Մատթեոս 18:29-30 – 29 Այդ ժամանակ ծառայակիցը նրա առաջն ընկավ, աղաչում էր նրան և ասում. "Համբերատար եղիր իմ նկատմամբ, և բոլորը կհատուցեմ քեզ": 30 Բայց նա չկամեցավ, այլ գնաց և նրան բանտ գցեց, մինչև պարտքը հատուցեր: ***(100 Դինար էր պարտք)***

Բիլլի Գրեհեմի վկայությունը Աստծո բավարար շնորհի մասին.

II. ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀԸ ԲԱՎԱՐԱՐ Է ԻՄ...

- ***Հիվանդության, տկարության և իմ կյանքի բոլոր ոլորտներում...***

*Բ Կոր. 12:9 – Իսկ նա ինձ ասաց. «Քեզ իմ **շնորհը** բավական է, որովհետև իմ **զորությունը** տկարության մեջ է կատարյալ դառնում»: Արդ ավելի հոժարությամբ իմ տկարություններով կպարծենամ, որպեսզի Քրիստոսի զորությունն իմ մեջ բնակվի:*

*Փիլ. 4:13 – Ամեն բան կարող եմ ինձ **զորացնող** Քրիստոսով:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ